



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր թիվ 78) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Չ Ե Ց Ի՝

1. Զանգվածային լրատվամիջոցի հրապարակման համառոտ բովանդակությունը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ **Պալատ**) մամուլի խոսնակը 15.03.2018թ. զեկուցագրով հայտնել է, որ «Հայկական ժամանակ» օրաթերթի <http://armtimes.com> լրատվական կայքում 2018թ. մարտի 13-ին կատարվել է «**Տիգրան Աթանեսյանի գրասենյակի վրա հարձակված անձինք երաշխիքներ են ունեցել. փաստաբան**» վերտառությամբ հրապարակումը (այսուհետ՝ **Հրապարակում**)¹, որում մասնավորապես նշվել է փաստաբան Տիգրան Աթանեսյանի հետևյալ խոսքը. «Իմ նպատակն այն է, որ ցույց տամ, որ այդ պալատը խուժան հիմնարկ է և ինչ է այնտեղ կատարվում: Ողջ իմաստը իրավապահներին եւ ոստիկաններին դիմելու, դա է եղել: **Պետք է հանրությունը իմանա ինչ է իրենից ներկայացնում այդ խայտառակ հիմնարկը ուր է հասել և որ այն կործանալու է պալատը: Նպատակս դա է եղել, ոչ մի անձնական նպատակ ես այս գործով չեմ հետապնդում**»:

2. Պալատի եզրահանգումը և որոշումը.

Գտնում եմ, որ զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնադրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է*

¹ <http://armtimes.com/hy/article/132962>

կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հարկանիշների առերևույթ առկայությունը:

Հրապարակման մեջ արտացոլված **«...պալապրը խուժան հիմնարկ է...»** և **«Պետք է հանրությունը իմանա ինչ է իրենից ներկայացնում այդ խայտառակ հիմնարկը ուր է հասել...»** արտահայտությունները փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից կատարված լինելու փաստը հաստատվելու դեպքում, վերջինիս վարքագիծը կարող է հակասել Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ **Կանոնագիրք**) 2.2.3 ենթակետի պահանջին:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ **մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:**

Նշված կանոնից հետևում է, որ փաստաբանը մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեության ընթացքում չպետք է կատարի այնպիսի արարք, որը կարող է վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Ժողովրդավարության և բազմակարծության պայմաններում խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը ենթադրում է ոչ միայն համաձայնություն կամ համախոհություն, այլև այլակարծություն և բանավեճ, հակադիր հայացքներ և կարծիքներ, որոնք կարող են ունենալ նաև սուր առճակատման, ոչ հաճելի, անհանգստացնող և նույնիսկ՝ անձի անդորրը ցնցող ձևակերպումների կամ լարված վիճաբանության արտահայտություն, քանի դեռ խոսքի ազատությունը չի օգտագործվում այնպիսի նպատակներով, որոնք ուղղված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, Մարդու իրավունքների կառուցակարգերի հիմքում ընկած հիմնարար արժեքների՝ հանդուրժողականության, խտրականության բացառման և բռնության արգելքի դեմ:

Սույն որոշմամբ էական է նաև քննարկել փաստաբանի խոսքի և կարծիքի սահմանադրական ազատությունն իրացնելու թույլատրելի սահմանները: Ընդ որում՝ հատկանշական է, որ փաստաբանի խոսքի և արտահայտման ազատությունը սերտորեն կապված է նրա անկախության հետ:

Փաստաբանությունը՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, ունի սահմանադրաիրավական կարգավիճակ, քանի որ անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանությունը երաշխավորված է Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությամբ:

Փաստաբանության սահմանադրաիրավական կարգավիճակը կանխորոշում է նաև փաստաբանի ազատության բավականին լայն շրջանակը, որն արտահայտվում է նաև խոսքի և կարծիքի ազատության ոլորտում:

Ելնելով փաստաբանական գործունեության՝ սահմանադրական և օրենսդրական մակարդակներում ամրագրված հիմնարար երաշխիքներից՝ Կանոնագրքի 2.1 կետը փաստաբանների վրա դնում է անկախ լինելու, այն է՝ տարաբնույթ ազդեցություններից զերծ մնալու պարտականություն և, մասնավորապես, պարտավորեցնում է փաստաբանին իր կարգավիճակից բխող գործունեությունն ու վարքագիծը չհամապատասխանեցնել դատարանի կամ երրորդ անձանց կամքին՝ նրանց գոհացնելու նպատակով:

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ **փաստաբանը հարուկ դեր է ստանձնում** և նրա պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանը՝ որպես արդարադատության շահերին ծառայելու կոչումը կրող անձ, պարտավոր է իր գործողություններով նպաստել փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքի ձևավորմանը:

Փաստաբանի կոչումը առաջ է բերում մի շարք իրավական և բարոյական պարտավորություններ վստահորդների, դատարանների, հասարակության, փաստաբանի մասնագիտության, ինչպես նաև գործընկերների նկատմամբ: Փաստաբանի կոչման ընկալմամբ և այդ կոչման ներքո հանդես գալիս, մասնագիտական պարտականությունների կատարման և իր՝ որպես փաստաբանի իրավունքների ու ազատությունների իրացման գործընթացում փաստաբանից պահանջվում է ոչ միայն պրոֆեսիոնալիզմի դրսևորում, այլ նաև զսպվածություն, բարեկիրթ և հարգալից վերաբերմունք:

Փաստաբանի հանդեպ նման պահանջներ դնելու անհրաժեշտությունը բխում է առաջին հերթին փաստաբանական գործունեության իրավապաշտպան էությունից:

Փաստաբանն իրավապաշտպան գործունեությամբ նպաստում է արդարադատության իրականացմանը՝ հանդիսանալով միջնորդ հասարակության և պետության միջև: **Հետևապես, փաստաբանի կողմից իրականացվող գործունեությունը հարկավոր է դիտարկել առավել լայն համատեքստում, քան զուտ վստահորդի հանձնարարության կատարումը:** Որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ՝ փաստաբանը միանգամայն իրավասու է հանդես գալ մարդու իրավունքների պաշտպանության, պետախիշխանական լիազորություններ ունեցող անձանց, ինչպես նաև **ՀՀ փաստաբանների պալատի գործողությունները կամ անգործությունը քննադատելու դիրքերից:** Լինելով իրավունքի մասնագետ՝ փաստաբանն ունի նաև հասարակական նշանակության խնդիրների վերաբերյալ փորձագիտական կարծիք հայտնելու և այդպիսով հանրային կարծիքի վրա ներազդելու կարևոր առաքելություն:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը փաստաբանի գործունեության հիմնաքարերից է, փաստաբանության սահմանադրական կարգավիճակի իրացումն ապահովող որակական հատկանիշներից մեկը: Փաստաբանի համար չի կարող

երաշխավորված լինել իր անկախությունն ու մասնագիտական ազատությունը, եթե նա օժտված չէ խոսքի ազատության լայն ծավալով:

Միևնույն ժամանակ, ելնելով Կանոնագրքից և Պալատի խորհրդի որոշումների մեկնաբանություններից, ակնհայտ է, որ **փաստաբանին տրված այս իրավունքն անսահմանափակ չէ** և ենթակա է որոշ սահմանափակումների (ատելության խոսքը, բռնության և անհանդուրժողականության կոչը, վիրավորանքը)՝ հաշվի առնելով փաստաբանի սոցիալական բարձր դիրքը և հասարակության մեջ նրա խոսքի ազդեցությունը:

Փաստաբանի նկատմամբ վստահությունը և մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից նույնացվում է փաստաբանության՝ որպես ինստիտուտի հետ, ընդհանրապես, ուստի և փաստաբանն իր առօրյա գործունեությունն իրականացնելիս բարոյական պարտականություն է կրում դրսևորել այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը:

Գործող օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունում փաստաբանությունը միավորում է փաստաբանների՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող կառույցը՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը:

Փաստաբանության զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Պալատի անդամ փաստաբանների կողմից ոչ միայն վստահորդների շահերը ներկայացնելու գործընթացում Օրենքի և Կանոնագրքի սկզբունքների պահպանումը և պրոֆեսիոնալ վարքագիծը, այլ նաև հավասարակշռված, գրագետ, բարեկիրթ և հարգալից վերաբերմունքը գործընկերների և փաստաբանությունը միավորող կառույցի՝ փաստաբանների պալատի նկատմամբ:

Յուրաքանչյուր փաստաբան՝ գործող օրենսդրության ուժով լինելով փաստաբանների պալատի անդամը, այդ կառույցի մասնիկը՝ բարոյական պարտականություն է կրում հարգելու փաստաբանների պալատը որպես փաստաբանությունը միավորող ինստիտուտի:

Փաստաբանը ոչ միայն ունի օրենքով թույլատրելի սահմաններում իր կարծիքն ազատ արտահայտելու, այլ նաև Պալատի մարմինների գործունեության և որոշումների վերաբերյալ քննադատական վերաբերմունք ունենալու, նման վերաբերմունքը նույնիսկ հրապարակայնորեն արտահայտելու, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով Պալատի մարմինների՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք: Ընդ որում՝ քննադատությունը ենթադրում է բացասական կարծիքի (գնահատականի) դրսևորում, սակայն, հարկ է նշել, որ քննադատության միջոցով երևույթի քննարկման և վերլուծության հիմքում պետք է ընկած լինեն ոչ թե վիրավորանքը, անհարգալից վերաբերմունքը կամ վարկաբեկումը, այլ զսպվածության և բարեկիրթության սահմաններում տեղավորվող գնահատականը (կարծիքը): **Այս առումով անհրաժեշտ է հստակ տարբերակել**

քննադատության՝ որպես բացասական գնահատականի (կարծիքի) և անհարգալից վերաբերմունքի (վիրավորանքի կամ բարի համբավի արատավորման) սահմանագիծը:

Տվյալ դեպքում, փաստաբան Տիգրան Աթանեսյանը՝ զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչի հետ զրույցի շրջանակներում հանդես է եկել խոսքով, որով փաստաբանների պալատը բնորոշել է որպես խուժան և խայտառակ հիմնարկ:

Սույն կարգապահական վարույթի ընթացքում ստուգման է ենթակա այն հանգամանքը, **թե Հրապարակման մեջ նշված «...պալատը խուժան հիմնարկ է...» և «պետք է հանրությունը իմանա ինչ է իրենից ներկայացնում այդ խայտառակ հիմնարկը ուր է հասել...» արտահայտություններն արդյո՞ք կատարվել են փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից, թե՞ ոչ, եթե այո, ապա փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից զանգվածային լրատվության միջոցով փաստաբանների պալատի մասին նման որակումներ տալը (արտահայտություններ կատարելը) նպաստում է արդյո՞ք փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը, թե՞ ոչ:**

* * *

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Հաշվի առնելով, որ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկվում է զանգվածային լրատվամիջոցի հրապարակման առիթով, գտնում եմ, որ սույն որոշումը պետք է նաև հրապարակել Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 39.1 հոդվածի 4-րդ մասի, 39.3 հոդվածի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր թիվ 78) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-18056):

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

– կարգապահական գործը սահմանված կարգով հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստող փաստաբանին.

– սույն որոշման օրինակն ուղարկել փաստաբան Տիգրան

Աթանեսյանին՝ պարզաբանելով նրա «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.2 հոդվածով նախատեսված հրավումները.

– ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

17 մարտի 2018թ.
թիվ 126-Ա/ԿԳ-18056
ք. Երևան